

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	1
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ	2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	3
ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	6
ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ	7-22
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	23-31
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	32-34
ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ	35-39
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	40
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	41-43
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ	44-45
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ	46-48
ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	49
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	50

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ԱՆԳԵՂԱԿՈԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ

2023 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ



**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

«ԱՆԳԵՂԱԿՈԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

**ՀՀ Սյունիքի մարզ, գ. Անգեղակոթ,
4-րդ փողոց, 4- րդ նրբանցք, 20 շենք
Հաստատության հեռախոսահամարը՝
098.39.49.13 (տնօրեն)**

**Հաստատության էլեկտրոնային հասցեն՝
angekhako@schools.am**

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ դպրոց) շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցը 13.12.2002 թ. գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետտեգիստրի տարածքային բաժնում:

Դպրոցի նոր կանոնադրությունը հաստատվել է 2017 թ.:

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2011թ. հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- ✓ տարրական ընդհանուր - 105 սահմանային տեղով
- ✓ հիմնական ընդհանուր - 340 սահմանային տեղով
- ✓ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական գործունեություն – 145 սահմանային տեղով
- ✓ դպրոցի մանկավարժների թիվը 27 է, որից բարձրագույն կրթությամբ՝ 25, միջին մասնագիտական՝ 2, ուսումնասօժանդակ աշխատողներինը՝ 15:

Աշակերտների միջին թիվը 175 - 185 է:

Մեկ ուսուցչին ընկնող աշակերտների մոտավոր թիվը 7 է:

Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման ծրագիրը այն ռազմավարական փաստաթուղթն է, որում սահմանվում են 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով կրթական հաստատության ինքնազարգացման և համայնքային կարիքները:

Ծրագիրը կազմվել է 5 տարվա համար և ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝

- 1) հաստատության գործունեությունը
- 2) իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը
- 3) նպատակների և խնդիրների սահմանումը
- 4) սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը
- 5) պատասխանատուները
- 6) արդյունքների գնահատման չափանիշները
- 7) ռիսկերը
- 8) գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները:



ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ կրթական աստիճանների (տարրական, հիմնական և միջնակարգ) սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների՝ ձևավորել վերջնարդյունքներին ուղղված համապատասխան կարողունակություններ՝ ապահովելով հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն:



1. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

1.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանները

Դպրոցը տիպային շենք է, հզորությունը՝ - 590 աշակերտ տեղ:

2008 թ., երբ ընտրվեցի հաստատության տնօրեն, դպրոցի շենքը անմխիթար վիճակում էր. պատուհանների ապակիները ջարդված էին, դռները՝ հանված, դպրոցական գույքը 1980թ.-ից չէր թարմացվել: 2008թ. գարնանը դպրոցի վերանորոգման ծրագիրը պետքույն էր հաստատվեց: Հիմնանորոգումը կատարվեց 2008-20013թ.-ին: Հիմնանորոգվեց 5 մասնաշենքերից 4-ը, 5-րդ մասնաշենքի առաջին հարկը: Սկզբում դպրոցական գույքը նորոգեցինք մեր միջոցներով, ձեռք բերեցինք որոշակի քանակությամբ գույք՝ համագործակցելով մի շարք կազմակերպությունների, ՀԿ-ի, անհատ ներդրողների հետ: Սպանդարյան ՀԷԿ – ի (Կոնտուր Գլոբալ) միջոցներով ամբողջությամբ փոխեցինք դպրոցական գույքը, իսկ 2024թ. նույն կազմակերպության կողմից կստանանք 10 համակարգիչ՝ ըստ նախնական պայմանավորվածության: ՊՆ-ի կողմից ստացել ենք համակարգչային հրաձգարան, ՀՕՖ – կողմից՝ կարի մեքենաներ, արհեստագործական գործիքներ, նյութեր, կահավորել ենք արհեստագործական կաբինետներ տղաների և աղջիկների համար: Դպրոցի շենքային պայմաններն այսօրվա դպրությամբ բարելավված են. ունենք 4 մարզահրապարակ, մեկ սպորտդահլիճ իր գույքով, վերանորոգված հանդիսությունների դահլիճ, ճաշարան՝ վերանորոգված, հարմարավետ, պահեստային մասով, տաք ու սառը ջրով ապահովված, կահավորված, որտեղ 1-4-րդ դասարանների աշակերտները շուրջ 7 տարի է՝ օգտվում են տաք սննդից: Ունենք համակարգչային դասարան, լաբորտորիաներ, որոնք առաջիկա 5 տարիների ընթացքում պետք է համալրենք գույքով, ուսումնական նյութերով: Դպրոցում առկա է 17 դասասենյակ:

1.2 Հաստատության նյութատեխնիկական բազան

Մեր նպատակն է՝ հարստացնել, արդիականացնել, բարելավել հաստատության նյութատեխնիկական բազան՝ այսպիսով նպաստելով կրթության որակի բարելավմանը: Հաստատության նյութատեխնիկական բազան տարիներ շարունակ համալրվել է նոր, ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով: Դպրոցն ունի 9 համակարգիչ, 10 նոութբուք, 3 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք:

Ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության համար առանձնացրել ենք մեկ լաբորատորիա, որը համալրված է ժամանակակից սարքերով ու սարքավորումներով, ուսումնական նյութերով, դիդակտիկ պարագաներով: Աշխարհագրության վերաբերյալ ունենք ուսումնական նյութեր, քարտեզներ, գլոբուսներ: Մաթեմատիկայի և մնացած առարկաների համար նույնպես կան ուսումնական նյութեր: Տարրական դասարանները կահավորված են, ապահովված անհրաժեշտ ուսումնական նյութերով: Ունենք մեթոդամանկավարժական գրականությամբ, ուսումնական նյութերով կահավորված մեթոդկաբինետ:

Կահավորված են դպրոցի միջանցքները, որտեղ ստեղծվել են ծաղկառատ հանգստի գոտիներ:

Կահավորված են նաև հանդիսությունների դահլիճը, ընթերցասրահը՝ համապատասխան գույքով, սովորողների արժեհամակարգի ձևավորմանը նպաստող ցուցադրական նյութերով:

Ունենք կահավորված աշակերտական խորհրդի սենյակ:

Սպորտային դահլիճն ու սպորտհրապարակները կահավորված են անհրաժեշտ մարզասարքերով, սպորտգույքով:

Աշխատում ենք ձեռքբերել նոր սերնդի էլեկտրոնային գրատախտակներ և պրոյեկտորներ, նոր գույք, թարմացնել լաբորատոր նյութերը:

1.3 Կառավարման և խորհրդակցական մարմիններ

1. Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրի իրականացմանն աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորված են խորհրդակցական մարմիններ՝ կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական և աշակերտական խորհուրդներ:

Կառավարման խորհուրդը գործում է և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրանց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին: Դպրոցի կառավարման խորհուրդը << կառավարության սահմանած կարգով ընտրել է տնօրեն, տնօրենի գործունեության նկատմամբ իրականացրել ընթացիկ վերահսկողություն, հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, քննարկել և հավանություն է տվել

դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին, տնօրենի ներկայացմամբ՝ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, տվել է հավանություն և ներկայացրել համապատասխան լիազորված մարմին, քննարկել է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները, վերահսկել է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը.

1.4 Հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

- ✚ Հաստատությունը համագործակցում է ՏԻՄ-ի հետ՝ բարելավելու դպրոցավարության հետ կապված հարցերը: ՏԻՄ-ը գործում է համայնքի բնակիչների շահերից ելնելով՝ սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը, որոնց թվում են նաև դպրոցական հարցերը:
- ✚ Հաստատությունը համագործակցում է ծնողական համայնքի հետ, քանի որ ընտանիքը մարդկային համընդհանուր կոլեկտիվի մի մասն է, մատաղ սերնդի սոցիալականացման ամենակարևոր ինստիտուտը: Ծնողներին համատեղ գործունեության մեջ ներգրավելու պրակտիկան ցույց է տվել, որ նույն կրթական միջավայրում փոխգործակցելով՝ հնարավոր է լուծել մատաղ սերնդի կրթման և սոցիալականացման հարցերը:
- ✚ Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:
- ✚ Աշակերտական խորհուրդն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը: Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, ներքին

կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, պայքարում ուշացումների դեմ, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր: Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին: Անչափ կարևորում ենք աշակերտների կողմից բարձրացված հարցերի խոր և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը: Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

✚ Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է բազում ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ: Ծնողների հետ համագործակցությունը շարունակվել է նաև համավարակի պայմաններում: Նրանց հետ կապն իրականացվել է առցանց՝ սոցիալական տարբեր հարթակներում:

✚ Ձևավորված են առարկայական մեթոդական միավորումներ: Մ/Մ գործունեության հիմնական նպատակը մանկավարժական կադրերի մասնագիտական կրթության և անընդմեջ մեթոդական ուսումնառության ապահովումն է միասնական որոնողական աշխատանքների միջոցով: Նախագահներն ըստ տարեկան աշխատանքային պլանի կազմակերպում են նիստեր, կատարում կատարած աշխատանքների քննարկումներ, դասալսումների վերլուծություններ և այլն:

Բոլոր խորհրդակցական մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում

են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը: Խորհուրդներն ունեն իրական ինքնավարություն, ազատ են իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Խորհրդակցական մարմինների գործունեությունը ձևական չէ, աշխատում են լիարժեք կատարել իրենց պարտականությունները, որից շահում են դպրոցի ուսումնադաստիարակչական, կառավարման և ղեկավարման գործընթացները:

Դպրոցի տնօրենը գնահատում և ժամանակին միջոցներ է ձեռնարկում խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար:




Մանկավարժական խորհուրդը հավանություն է տալիս տարեկան աշխատանքային պլանին, ուսումնական պլանին, դասաբաշխմանը:

Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության գնահատումը

1. Կառավարման խորհրդի գործունեության գնահատումը

Հիմնախնդիր՝ դպրոցի կառավարման խորհրդի լիազորությունների և իրավունքների սահմանափակ լինելը:

Հիմնախնդրից բխող նպատակներ

-  նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ համատեղ որոշումների ընդունում
-  կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ համատեղ առաջարկությունների ներկայացում
-  դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին համատեղ առաջարկությունների ներկայացում:

2. Մանկավարժական խորհրդի գործունեության գնահատումը

Հիմնախնդիր՝

Մանկավարժական խորհրդի որոշակի պասիվությունը որոշումների կայացման գործում:

Հիմնախնդրից բխող նպատակներ՝

- ✍ Մանկավարժական խորհրդի անդամների համար կազմակերպել խորհրդակցություններ՝ նրանց դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու համար:
- ✍ Մանկավարժական խորհրդին ներկայացնել որոշումների կայացման գործում խորհրդի անդամների կարծիքների, լիազորությունների կարևորությունը:

3. Առարկայական մեթոդմիավորումների գործունեության գնահատումը

Հիմնախնդիր՝

- ✍ երբեմն ձևական մոտեցումներ են հանդես բերվում այդ գործընթացներում՝ նախագահների՝ աշխատանքներում ծանրաբեռնվածության պատճառով՝ հատկապես փաստաթղթային տնտեսության վարման հարցում

Հիմնախնդրից բխող նպատակներ՝

- ✍ ճիշտ ձևավորել առարկայական մեթոդմիավորումները (ընդգրկված հարակից առարկաներով)՝ հեշտացնելու միավորման աշխատանքները
- ✍ առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպել սեմինարներ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով և զարգացնել առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:
- ✍ նախագահներին ընդգրկել տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող դասընթացների
- ✍ հաճախակի կազմակերպել դասալսումներ, կազմակերպել քննարկումներ, կայացնել որոշումներ:
- ✍ նպատակներն իրագործելու համար իրականացնել աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

1. ուսումնադաստիարակչական գործունեություն
2. ուսումնամեթոդական գործունեություն

3. կազմակերպական-մեթոդական գործունեություն
4. տեղեկատվական - վերլուծական գործունեություն
5. խորհրդատվական գործունեություն
6. հայտորոշիչ գործունեություն
7. խմբագրական – հրատարակչական գործունեություն
8. փորձարարական – նորարարական գործունեություն
9. գիտամեթոդական գործունեություն:

4. Ծնողական խորհրդի գործունեության գնահատումը

Հիմնախնդիր՝ ծնողական խորհրդի հետ համագործակցության բարելավում

Հիմնախնդրից բխող նպատակներ.

- ✍ արմատապես բարելավել ծնողական խորհրդի դերը և այն ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում: Ծնողական խորհրդին վերապահել նաև հետևյալ լիազորությունները՝
 - ✍ ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում
 - ✍ ծնողական և մանկավարժական կոլեկտիվների կողմից աշակերտների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում
 - ✍ ծնողների մասնակցությունը դպրոցական, արտադպրոցական, արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական աշխատանքներին
 - ✍ ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը:
 - ✍ աջակցել ծնողական խորհուրդների աշխատանքների կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ- կենցաղային պայմանների տեսանկյունից: Այդ նպատակով ծնողների հետ ճշտել՝
 - դպրոց հաճախող այն աշակերտների թիվը, որոնց ընտանիքներն ընդգրկված են «Փարոս» ծրագրում
 - միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը

- զոհված ազատամարտիկ ծնողներ ունեցող աշակերտների թիվը
 - հաշմանդամ աշակերտների վերաբերյալ տեղեկատվությունը
 - նյութապես անապահով աշակերտների թիվը
 - ծնողական խնամքից զրկված աշակերտների թիվը
 - միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալները
 - աշակերտների թիվը, որոնց ծնողները կամ ծնողը հաշմանդամ են
 - աշակերտների թիվը, որոնք դասերին չեն հաճախում վարձու աշխատանք կատարելու պատճառով
 - անչափահաս աշակերտների թիվը, որոնք ընդգրկված են որոշակի աշխատանքներում
 - աշակերտների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում
- ✍ Վերլուծության հիման վրա առանձին կառույցների և դրանց ներկայացուցիչների միջոցով բարելավել աշակերտների սոցիալական պայմանները:

5. Աշակերտական խորհրդի գործունեության գնահատումը

Հիմնախնդիր՝ աշակերտական խորհրդի հետ համագործակցության բարելավումը

Հիմնախնդրից բխող նպատակներ

- ✍ աշակերտական խորհրդին տալ լիազորություններ՝ աշակերտական ինքնավարության միջոցով
- ✍ ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտմամբ
- ✍ ամրապնդել աշակերտ- ուսուցիչ, աշակերտ- համայնք կապը
- ✍ ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը:
- ✍ աշակերտների ինքնավարության միջոցով ապահովել նրանց կրթությունն ու ինքնակրթությունը, նպաստել համակողմանի զարգացմանը:
- ✍ բարձրացնել աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում:

Հաստատությունը շարունակում է սերտ համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ՝

- ✓ առավելագույնս կառավարելու, կազմակերպելու ուսումնական գործընթացը
- ✓ ապահովելու դպրոցի նյութատեխնիկական բազան
- ✓ ամրապնդելու համայնք-դպրոց, ծնող-դպրոց կապերը
- ✓ ներգրավվել կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների կողմից ներկայացվող ծրագրերին, միջոցառումներին

1.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները և դրանց զարգացումն ապահովող միջոցառումները

- ✍ Ջարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները՝ սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար:
- ✍ Ուսուցչի օգնականների աշխատանքում բարելավել նոր պահանջների կատարումը՝ համատեղ դասավանդում, բազմազան կրթական կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու երեք մոտեցում, տարբերակված ուսուցման կարևորություն, մասնակցության ապահովում և այլն:
- ✍ Ջարգացնել դպրոցի հոգեբանական ծառայությունը՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար:
- ✍ Շարունակել հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչներին վերապատրաստման դասընթացներին ընդգրկելու աշխատանքը:
- ✍ Ապահովել ուսուցիչների SCS կարողությունների զարգացումը:
- ✍ Ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:
- ✍ Ունեն աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ:
- ✍ Ուսուցման գործընթացում կիրառում են դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարաներ, որոնք աշակերտներին հնարավորություն է տալիս ստանալ բավարար գիտելիքներ, ձեռք բերել անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
- ✍ Գիտեն գնահատման մեթոդաբանությունը և կարողանում են այն կիրառել:
- ✍ Գիտեն առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում են չափորոշիչներով:

- ✍ Իրենց աշխատանքում պատասխանատու են և պարտաճանաչ, նպաստում են դպրոցի ուսումնական և վարչական աշխատանքների կազմակերպմանը, ուսումնասիրում են գոյություն ունեցող փորձը և տարածում են իրենցը:
- ✍ Գիտեն տարիքային հոգեբանությունը:
- ✍ Գիտեն և հարգում են երեխաների իրավունքները:
- ✍ Պահպանում են մանկավարժական էթիկայի կանոնները:

Ընդհանուր տեղեկություններ ՀՀ Սյունիքի մարզի Անգեղակոթի

միջնակարգ դպրոցի ուսուցիչների համակազմի և ատեստավորման մասին

№	Ուսուցչի անուն, ազգանուն, հայրանունը	Ծննդյան թիվը	Դասավանդող առարկայան	Կրթությունը	Ատեստավորման ենթակա ուսուցիչներ՝ ներկայացված վերաադարձադաստանն դասընթացների	Պարզ ընթացակարգով ատեստացիայի ներկայացված ուսուցիչներ	ՍՍԱԺԸ
1	Պետրոսյան Անահիտ Շավարշի	1968	դասվար	Բարձր.			33
2	Կափունց Ժաննա Ալեքսեյի	1958	քիմիա	Բարձր.	X	X	28
3	Ադամյան Լիդա Գերասիմի	1974	Հայոց լ. և գրակ.	Բարձր.	X	X	23
4	Մնացականյան Մարգարիտա Ս.	1978	Հայոց լ. և գրակ.	Բարձր.	X	X	21
5	Մակարյան Աննա Վոլոդյայի	1978	Հայոց լ. և գրակ.	Բարձր.	X	X	25
6	Ավանեսյան Նելլի Գեորգիի	1957	Ռուսաց լ. և գրակ.	Բարձր.	X	X	32
7	Սարգսյան Նաիրա Կոլլայի	1978	Օտար լ./ անգլ.	Բարձր.	X	X	22
8	Պետրոսյան Մարինե Դավթի	1975	Պատմություն	Բարձր.	X	X	22
9	Պողոսյան Անժելա Սոսիկի	1970	Պատմություն	Բարձր.	X	X	28
10	Հայրապետյան Նարինե Լիների	1969	Աշխարհ.	Բարձր.	X	X	27
11	Մելիքյան Անի Սոկրատի	1990	Մաթեմ.	Բարձր.	X	X	6
12	Պողոսյան Սաթենիկ Գուրգենի	1973	Մաթեմ.	Բարձր.	X	X	24

13	Մնացականյան Մարգարիտա Մ.	1974	ֆիզիկա	Բարձր.	X	X	17
14	Մովսիսյան Գոհար	1990	Կենսաբ.,	Բարձր.	X	X	10
15	Օհանյան Արամ Մերկիսի	1973	Ֆիզկուլտ.	մ/մ	X	X	26
16	Հայրապետյան Վարդան Լիների	1975	Ֆիզկուլտ.	Բարձր.	X	X	23
17	Սիմոնյան Ստեփան Խաչատուրի	1990	զինղեկ	Բարձր.	X	X	3
18	Փանյան Ալինե Մանվելի		դասվար	բ	X	X	2
19	Պետրոսյան Էմմա Հրանտի	1968	դասվար	Բարձր.	X	X	25
20	Եփրեմյան Գոհար Սերվենտիկի	1977	դասվար	Բարձր.	X	X	23
21	Ավետիսյան Ռոզա Գրիգորի	1960	դասվար	Բարձր.	X	X	38
22	Առաքելյան Ռաիսա Քաջիկի	1976	Ռուսաց լ. և գրակ.	Բարձր.	X	X	18
23	Մանուկյան Պայծառ Մնացականի	1973	տեխնոլոգիա	մ/մ	X	X	26
24	Ստեփանյան Լիանա Բագրատի	1979	Հ. մանկ	Բարձր.			20
25	Գևորգյան Հասմիկ Շահենի	1987	Ուս. օգնական	Բարձր.			3
26	Պետրոսյան Ալեքսան Աբրիկի	2000	Ուս. շախմատ	թ/բ			0
27	Մանուկյան Գևորգ Հակոբի	1996	Ուս. օգնական	Բարձր.			3

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Այնուամենայնիվ, ուսուցիչները կարիք ունեն անընդհատ վերապատրաստվելու, զարգացնելու իրենց մեթոդական, առարկայական պատրաստվածությունները՝ նորագույն մեթոդներից, մանկավարժական տեխնոլոգիաներից, գիտության բնագավառում նոր նվաճումներից, ՏՀՏ կիրառումից:

ՀԻՄՆԱԽՆԴԻՑ ԲԽՈՂ ՆՊԱՏԱԿՆԵՐ

- ✍ Կազմակերպել բաց դասեր ՏՀՏ կիրառմամբ՝ ցույց տալու դրանց կիրառման արդյունավետությունը դասապրոցեսին:
- ✍ Ուսուցիչների կողմից առարկայական ուսումնամեթոդական նյութերի մշակման և դրանք ուսումնական գործընթացում ներդրման աշխատանքները դարձնել մասնախմբերի պլանների առաջնահերթություններից:
- ✍ Բարձրացնել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունը վերը նշված խնդիրների ուղղությամբ:

1.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները ու նորարարությունները

Թե ուսուցիչները և թե աշակերտները բավականին հմտացած են ՏՀՏ կիրառման մեջ, դրանք օգտագործում են՝ ապահովելով դասապրոցեսի արդյունավետությունը, նախագծային աշխատանքի կատարման և այն ներկայացնելու ժամանակ, դպրոցական, արտադպրոցական միջոցառումներ կազմակերպելիս, ուսումնական նյութի հետաքրքրությունը բարձրացնելու և այլ նպատակներով: Ուսուցիչները ՏՀՏ կիրառմամբ մասնակցում են հեռավար վերապատրաստման դասընթացների, անհրաժեշտության դեպքում անցկացնում հեռավար դասեր:

Կրթական տեխնոլոգիաները ևս կիրառելի են դասապրոցեսին. նրանք կիրառում են ուսուցման ավանդական (վերարտադրողական), համագործակցային ուսուցման, զարգացնող ուսուցման, մտածական գործողությունների փուլային ձևավորման, կոլեկտիվ համագործակցության, լիակատար (ամբողջական) յուրացման, հարմարվողական (ադապտացիոն) ուսուցման, մոդուլային ուսուցման տեխնոլոգիաները: Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդների կիրառումը ուսուցման գործընթացում ևս ակտիվ է, ուսուցիչները կիրառում են նաև նոր ժամանակակից մեթոդներ:

Ուսումնական առարկայի ուսուցման նպատակները և խնդիրներն իրականացնելիս կազմակերպում են խմբային աշխատանք, լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքներ, կազմակերպում և անցկացնում են են ինտերգրված դասեր, նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, սովորողների ճանաչողական հմտությունների, գործնական կարողություններ ձևավորմանը և ստեղծագործական մտածողությունը զարգացմանը: Կիրառում են սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատում:

Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալներն ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմը վերահսկում է ուսուցչի աշխատանքը, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալիս և հնարավորություն ստեղծում, աջակցում՝ նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառման համար:

Դպրոցն իր զարգացման առաջնահերթությունների մեջ կարևորում է գիտականորեն հիմնավորված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն:

Հիմնախնդիր

Մանկավարժական նոր տեխնոլոգիաների, նորագույն տեխնիկայի հաճախակի արդյունավետ կիրառումը էլ ավելի կբարելավի կրթության որակը դպրոցում:

Հիմնախնդրից բխող նպատակներ

- ✍ Պլանավորած կերպով ուսուցիչներին ներգրավել հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին:
- ✍ Ժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպված բաց դասերը դարձնել միջոց՝ առաջավոր փորձի փոխանակման, տարածման համար:
- ✍ Զարգացնել ուսուցիչների՝ ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման հմտությունները:

1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության վերլուծություն

- ✓ կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան
- ✓ մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, դասավանդման որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը
- ✓ պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ
- ✓ տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը
- ✓ յուրաքանչյուր դասարանի աշակերտների բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր:
- ✓ աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների և մեթոդմիավորումների նիստերում, քննարկվում են առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության լուրջ փոփոխություններին

աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու ձևերը

- ✓ ըստ անհրաժեշտության անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնում լուծման ուղիներ
- ✓ ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը
- ✓ ակտիվացել են փոխադարձ դասախոսումները
- ✓ հաճախակի կազմակերպվում են բաց դասեր՝ ըստ դրանց ներկայացվող մեթոդամանկավարժական պահանջների
- ✓ դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ:

Դպրոցում կրթության որակը գնահատվում է հետևյալ չափանիշներով.

1. ըստ ուսումնական գործընթացի փաստացի վիճակի՝

դպրոցը սահմանել է ուսումնական գործընթացի նպատակներ և խնդիրներ, կիրառում է համապատասխան տեխնոլոգիաներ, ուսուցումը համապատասխանեցնում է աշակերտների կարիքներին, ապահովված է անհրաժեշտ ուսումնական և ուսումնամեթոդական փաստաթղթերով, պահանջվող սարքավորումներով և ուսումնական տարածքով, գույքով:

2. ըստ կրթական գործընթացի կատարողականի՝

կրթական գործընթացում հանձնարարությունները, կազմակերպական գործողությունները կատարվում են ժամանակին և անսխալ, մշակված է մանկավարժների աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ, կատարվող աշխատանքները ձևական չեն, միշտ վերլուծվում են ուսումնական և աշխատանքային պլանից շեղվելու պատճառները, մշակվում են դրանց ուղղման գործողություններ, վերացվում են սխալները և դրանց հետևանքները:

3. ըստ կրթական գործընթացի արդյունավետության՝

կրթական գործընթացը բնութագրվում է մանկավարժական և կառավարման-կազմակերպման արդյունավետությամբ, աշակերտների պատրաստվածության մակարդակը հիմնականում համապատասխանում է նրանց իսկ պահանջներին և հասարակության կարիքներին (պատվերին), աշակերտների մոտ առկա են անհատական ձեռքբերումներ:

4. ըստ կրթական գործընթացի որակը կրթական աստիճանների՝

դպրոցի միջին և ավագ դպրոցներում կրթական գործընթացը կազմակերպվում է

արդյունավետ: Ճիշտ են սահմանված միջին, հիմնական և ավագ աստիճանների, ինչպես նաև մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների հետ համագործակցությունը և փոխկապակցվածությունը:

5. ըստ դասերի, ուսումնական միջոցառումների որակի՝

դպրոցի մանկավարժները մեթոդապես պատրաստված են, և նրանց կողմից դասերը, միջոցառումները պլանավորվում են ըստ համապատասխան նպատակների: Դասերը վերլուծվում են և կատարվում է թերությունների քննարկում և վերացման ուղիների մշակում:

1.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

- ✓ դպրոցն ընդգրկված է ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցում
- ✓ հիմնականում հաղթահարված են ներառականությունը, դրանք խաթարող սոցիալական խոչընդոտները
- ✓ ստեղծվել է ֆիզիկական համապատասխան միջավայր
- ✓ ԿԱՊԿ ունեցող սովորողներն հիմնականում ինտեգրված են հասարակությանը, ստանում են ներառական կրթություն
- ✓ դպրոցում առկա է ԲՄԹ (բազմամասնագիտական թիմ), որն ամենօրյա աշխատանք է կատարում ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ
- ✓ ԿԱՊԿ ունեցող սովորողներն ապահովված են դասագրքով , ուսումնաօժանդակ նյութերով
- ✓ Սովորողների մոտ հիմնականում հաղթահարված են մանկավարժահոգեբանական խնդիրները:

1.9 Աշխատակազմին արժևորման, խրախուսման, ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման

- ✓ յուրաքանչյուրի նկատմամբ անհատական մոտեցում
- ✓ անձնակազմի համար հնարավորությունների ստեղծում՝ առավելագույնս ներկայանալու աշխատանքում
- ✓ խրախուսման տարբեր ձևերի կիրառում՝ իր աշխատանքը լիարժեք կատարողների հանդեպ
- ✓ ուսուցիչներին մղել ինքնակրթության՝ տրամադրելով նրանց դասավանդման մոտեցումների արդիականացման վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն, կրթական կայքերի հասցեներ, ընդգրկել նրանց հեռավար դասընթացների, արդիականացնել գործիքակազմը և ռեսուրսները:

2.Նպատակների և խնդիրների սահմանումը

Մանկավարժական համակազմ

Յուրաքանչյուր տարի ունենում ենք 6-9 դիմորդ, մարզային և հանրապետական փուլի հաղթող մասնակիցներ, տարբեր բուհերում սովորողներ՝ ինչպես վճարովի, այնպես էլ անվճար համակարգում: Մանկավարժական կազմն ամբողջությամբ տեղացիներ են: Բացի 2 ուսուցից, ովքեր ունեն միջին- մասնագիտական մանկավարժական կրթություն, մնացածն ունեն բարձրագույն կրթություն: 2 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորմանը, ստանում է հավելավճար, 5 – ն էլ հայտագրվել է մասնակցելու:

Նպատակ՝ զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները

Խնդիրներ՝

- ✓ վերապատրաստումներում, ատեստացիոն գործընթացներում, սեմինարներում, վեբինարներում ուսուցիչների ընդգրկվածության ապահովում
- ✓ ինքնակրթության, ինքնավերլուծության խթանման, դասավանդման որակների արդիականացման, առաջավոր փորձի տարածման, մեթոդական աջակցության, ներդպրոցական վերահսկողության միջոցով նպաստել սահմանված նպատակին հասնելուն
- ✓ հետամուտ լինել, որ ուսումնական գործընթացն ըստ նոր չափորոշչային պահանջներին համապատասխան կազմակերպվի
- ✓ զարգացնել դպրոցի հոգեբանական ծառայությունը՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար
- ✓ պահովել ուսուցիչների SCS կարողությունների զարգացումը
- ✓ մասնակցություն հանրակրթական այլընտրանքային (միջազգային, փորձարարական, հեղինակային) ծրագրերին՝ առանձին բովանդակային, կրթական տեխնոլոգիաների կամ ուսուցման կազմակերպման ոչ ավանդական ձևերի ուղղությամբ

Նպատակ՝ Կրթության մատչելիության ապահովում

Խնդիրներ՝

- ✓ դպրոցում այնպիսի հոգեբանամակավարժական միջավայրի ձևավորում, որը թույլ կտա յուրաքանչյուր աշակերտի իր հնարավորություններին և հակումներին համապատասխան յուրացնել կրթական ծրագիրը և լինել հաջողակ
- ✓ ուսուցչի օգնականների աշխատանքում բարելավել նոր պահանջների կատարումը՝ համատեղ դասավանդում, բազմազան կրթական կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու երեք մոտեցում, տարբերակված ուսուցման կարևորություն, մասնակցության ապահովում և այլն
- ✓ Սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրում:
- ✓ Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում:

Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Նպատակ՝ Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության ակտիվացում

Խնդիրներ՝

- ✓ Շարունակել սերտ համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը
- ✓ Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովմանը
- ✓ Դպրոցի կառավարման ժողովրդավարացում, դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում:

Դպրոցի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա

Նպատակ՝ ստեղծել բարելավված շենքային պայմաններով և նյութատեխնիկական հարուստ բազայով դպրոց

Խնդիրներ՝

- ✓ Դիմել ԿԳՄՍՆ –ին և մարզպետարանի համապատասխան բաժիններին՝ հնարավորությունների սահմաններում օգնել դպրոցին՝ արդիականացնելու նյութատեխնիկական բազան, որը կնպաստի կրթության որակի բարելավմանը

- ✓ Համագործակցել Սիսիանում և մարզում գործող ՀԿ-ին և արտասահմանյան կազմակերպություններին՝ բարելավելու ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ուսումնական /ֆիզիկական/ միջավայրը
- ✓ առարկայական կաբինետների ստեղծում
- ✓ Համակարգչային տեխնիկայի, էլեկտրոնային գրատախտակների համալրում նոր սերնդի տեխնիկայով
- ✓ Կահավորել ժամանակակից գրադարան /նաև առցանց/ և ընթերցասրահ
- ✓ Սպորտային դահլիճի և սպորտհրապարակի կահավորում նոր գույքով:

Աշակերտական համակազմ

Նպատակ՝ աշակերտական համակազմի ձևավորում

Խնդիրներ՝

- ✓ Ուսումնառության որակի բարելավում
- ✓ Արժեհամակարգի ձևավորում
- ✓ Սովորողների մոտիվացիայի խթանում
- ✓ Աշակերտական ինքնավարության խթանում
- ✓ Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում
- ✓ Մշտադիտարկումներ, կրթական կարիքի գնահատում և սովորողների ուսուցման անհատական մոտեցումների կիրառում դասապրոցեսում
- ✓ Աշակերտական խորհրդի նախաձեռնություններին աջակցություն

Աշխատանք օժտված սովորողների հետ

Հիմնախնդիր՝

Ունենալ օժտված երեխաների հետ արդյունավետ աշխատող ուսուցիչներ:

Հիմնախնդրից բխող նպատակներ՝

Զարգացնել ուսուցչական կարողություններ՝ արդյունավետ աշխատելու օժտված երեխաների հետ հետևյալ կերպ.

- ✍ Ուսուցիչներին ընդգրկել համապատասխան վերապատրաստավորման դասընթացների
- ✍ Ինքնակրթությամբ զարգացնել համապատասխան կարողություններ

- ✍ մշակել առարկայի ուսումնասիրության անհատական կրթական ռազմավարություններ,
- ✍ կրթությունը կազմակերպել սովորողների հայտորոշիչ հետազոտությունների արդյունքներին համապատասխան և ինքնուրույն անցկացնել հոգեբանական հետազոտություններ,
- ✍ օժտված երեխաների հետ աշխատելու հատուկ մանկավարժահոգեբանական պատրաստվածություն ձեռքբերել
- ✍ կիրառել ուսուցման արագացված եղանակներ և մեթոդներ
- ✍ երեխաների մոտ ձևավորել նաև հետևյալ որակները.
- ✚ Ես-հայեցակարգ(լավատեսական ուղղվածությամբ)
- ✚ Լայն աշխարհայացք
- ✚ Մտքի ճկունություն
- ✚ Ստեղծարարություն (կրեատիվություն)
- ✚ Ապրումակցման կարողություն
- ✚ Անդրադարձ անելու կարողություն
- ✚ Նպատակաուղղվածություն, հաստատակամություն
- ✚ Ակտիվություն
- ✚ Հասունություն
- ✚ Բարյացակամություն
- ✚ Հուզական հավասարակշռվածություն
- ✚ Ստեղծագործական կարողությունների զարգացում:
- ✚ բացահայտել օժտված սովորողներին
- ✚ կազմակերպել լրացուցիչ, անհատականացված ուսուցում օժտված սովորողների հետ:

Առանձնացնել օժտված երեխաներին ուսուցանելու հիմնախնդիրները, դրանք են՝

1. **Օժտված երեխաների անձի զարգացումը** - Օժտված երեխաների անձի զարգացումը ենթադրում է փոփոխություններ երեխայի զարգացման ինտելեկտուալ, հուզական, կամային ոլորտներում: Ուսումնական գործունեության զարգացումը նպաստում է երեխայի անհատականության, ստեղծագործականության զարգացմանը, ընդունակությունների մաքսիմալ օգտագործմանը,

նպատակադրվելուն ու նպատակին հասնելուն, ազատ ընտրություն կատարելուն: Անձի զարգացումը միշտ կապված է հոգեկան նորագոյացությունների հետ: Այդ գործընթացն անցնում է ադապտացիայի, սոցիալ-մշակութային նորմերի յուրացման և սովորելու կարողության միջով:

2. **Կրթության բովանդակությունը** - Կրթության բովանդակությունն իր մեջ ներառում է գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքների ամբողջություն, ինչպես նաև ստեղծագործական գործունեության փորձ, արժևորող վերաբերմունք կյանքի, աշխարհի նկատմամբ: Կրթության բովանդակությունը կազմում է արժեքների, բանականության, հոգևոր և բարոյական դիրքորոշումների հիմքը: Այդ իսկ պատճառով առարկաների արագ և խորացված ուսուցումը բավական չէ, անհրաժեշտ է նոր բովանդակության այնպիսի առարկայի ներմուծում դպրոցական ծրագրեր, ինչպիսին օրինակ՝ «Մշակույթների երկխոսություն», «Համաշխարհային գեղարվեստական մշակույթ», «Հաղորդակցման մշակույթ» և այլ առարկաներ:

3. **Առավել արդյունավետ ուսումնական պարապմունքների ձևեր, եղանակներ-**
Առավել արդյունավետ ուսումնական պարապմունքների ձևերից են.

- անհատական պարապմունք,
- գիտահետազոտական գործունեություն,
- համատեղ ստեղծագործական գործունեություն:

4. **Արժևորել համատեղ գործունեության դերը**, քանի որ այն նպաստում է հաղորդակցական կարողությունների, սոցիալական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Աշխատանք հավասար պայմաններում իրենց մտավոր զարգացման բարձր մակարդակով առանձնացող սովորողների հետ

Հիմնախնդիր՝

Հավասար պայմաններում իրենց մտավոր զարգացման բարձր մակարդակով առանձնացող սովորողների հետագա զարգացման, մասնագիտական ճիշտ կողմնորոշման գործընթացում շարունակական կրթությունը:

Հիմնախնդրից բխող նպատակ՝

- ✓ Հավասար պայմաններում իրենց մտավոր զարգացման բարձր մակարդակով առանձնացող սովորողների հետագա զարգացման, մասնագիտական ճիշտ կողմնորոշման գործընթացում համար համագործակցել ԲՈՒՀ-ի հետ, ինչի արդյունքում հնարավորինս հստակ կուրվագծվի երեխայի ապագան:
- ✓ Անհատակողմնորոշիչ աշխատանքով հարստացնել այդ սովորողների գիտելիքները, զարգացնել միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները և վերջնարդյունքները:
- ✓ Հավասար պայմաններում իրենց մտավոր զարգացման բարձր մակարդակով առանձնացող սովորողների հետագա զարգացման համար բավարար նախապայմաններ ստեղծելու նպատակով՝
 - ✚ ընտրվում են այնպիսի մեթոդներ և ուսուցման ձևեր, որոնք նպաստում են սովորողի՝ համադրելու, համեմատելու, վերլուծելու, դասակարգելու, եզրահանգումներ կատարելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը,
 - ✚ հնարավորինս քիչ ժամանակ է տրամադրվում տեղեկատվությանը, ժամանակի մեծ մասն ուղղվում է քննարկումներին՝ օգտագործելով «բաց հարցեր», որոնք չեն ենթադրում «այո» կամ «ոչ» պատասխաններ,
 - ✚ մշտապես կատարելագործվում է սովորող- ուսուցիչ արդյունավետ համագործակցությունը,
 - ✚ ցուցաբերվում է հարգանք երեխայի անհատական հնարավորությունների և հետաքրքրությունների նկատմամբ:

Աշխատանք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ

Դպրոցն ընդգրկված է ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցում: Հաստատության հիմնական ցուցանիշներն են՝

- ✚ հաղթահարված ներառականությունը, դրանք խաթարող սոցիալական խոչընդոտները
- ✚ ֆիզիկական համապատասխան միջավայրը, դասասենյակների դասավորվածությունը
- ✚ ԿԱՊԿ ունեցող սովորողների ոչ մեկուսացված լինելը
- ✚ ԲՄԹ-ի առկայությունը

- ✚ ԿԱՊԿ ունեցող սովորողների դասագրքով ապահովված լինելը
- ✚ Մանկավարժահոգեբանական խնդիրների հաղթահարումը:

Աշխատանք սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ

Նպատակ՝ և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորում

Խնդիրներ՝

- ✓ նախասիրությունների բացահայտմանն ուղղված թեստեր
- ✓ մասնագիտությունների և մարդու բնույթի համապատասխանությունը ակտորոշող թեստեր
- ✓ մասնագիտությունների վերաբերյալ ֆիլմերի դիտում
- ✓ ճանաչողական այցեր, հանդիպումներ
- ✓ աշխատաշուկայի ներկայացում, վերլուծություն:

Ուսումնական միջավայր

Նպատակ՝

Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական բարելավում

Խնդիրներ՝

- ✓ ստեղծել անվտանգ ուսումնական միջավայր
- ✓ կատարել լաբորատորիաների, առարկայական կաբինետների, հանգստի և ժամանցի պայմանների շարունակական համալրում, արդիականացում
- ✓ ներդնել դասավանդման նոր տեխնոլոգիաները դասապրոցեսում

Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Նպատակ՝ Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում

Խնդիրներ

- ✓ աշխատանք օժտված երեխաների հետ

- ✓ վերջնարդյունքների գնահատում. մնացորդային գիտելիքի ստուգում
- ✓ բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում
- ✓ օտար լեզուների խորացում:

Տեխնոլոգիաներ և նորարարություն

Նպատակ՝ դասավանդման մոտեցումների արդիականացման, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացման, նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրման միջոցով բարելավել կրթության որակը:

Խնդիրներ՝

- ✓ ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում
- ✓ մեթոդկաբինետի ստեղծում, ռեսուրսների համալրում, ժամանակակից գրականության ձեռքբերում
- ✓ հեռավար դասավանդման հմտությունների զարգացում՝ ուսուցիչների ինքնակրթություն, սեմինարներ, վեբինարներ
- ✓ մենթորական համակարգի ներդրում
- ✓ էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում
- ✓ նոր սերնդի համակարգչային տեխնիկայի ձեռքբերում
- ✓ լաբորատոր սարքերի և սարքավորումների, ուսումնական նյութերի համալրում, արդիականացում
- ✓ մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ, քննարկումներ:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Նպատակ՝ Ուսուցիչներին իրազեկել դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին

Խնդիրներ՝

- ✓ ուսուցիչներին տեղեկացնել դրանցում կատարվող փոփոխություններին
- ✓ ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը՝ իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս
- ✓ համալրել ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմը
- ✓ կատարել իրավական ակտերի լուսաբանում

- ✓ e-draft.am կայքի ներկայացում, հանրային քննարկման դրված ակտերի ներկայացում
- ✓ ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- ✍ Այսուհետ կրթական գործընթացը կազմակերպել ըստ ՀՀ կառավարության 04.02. 2021 թվականի N 136-Ն որոշմամբ ընդունված հանրակրթության պետական չափորոշի և առարկայական ծրագրերի և չափորոշիչների ձևավորման ու հաստատման գործընթացների և ՀՀ հանրակրթության համակարգում դրանց ներդրման հետ կապված հարաբերությունների:
- ✍ Կրթական գործընթացը կազմակերպել՝ ելնելով Հանրակրթության պետական չափորոշի հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից՝
- 1) ուսումնական բնագավառներ, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջներ.
 - 2) շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ).
 - 3) հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ.
 - 4) սովորողների գնահատման ձևեր, սանդղակ, հաշվառման կարգ:
- ✍ Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել համակողմանիորեն զարգացած, մասնագիտորեն կողմնորոշված, ազգային արժեքներ կրող, հայրենասեր, գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ, համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ, մարդասիրության ոգով դաստիարակված, գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքող քաղաքացիներ:
- ✍ Իրականացնել տարրական, հիմնական, միջնակարգ և համընդհանուր ներառական կրթություն՝ ըստ Հանրակրթության պետական նոր չափորոշի, որը ելնում է սովորողների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներն ըստ կրթական աստիճանների և ըստ կրթական աստիճանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների:

- ✍ Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրի իրականացմանն աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորել խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական և աշակերտական խորհուրդներ: Բոլոր խորհրդակցական մարմինները կունենան իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը: Խորհուրդները կունենան ինքնավարություն, ազատ կլինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Խորհրդակցական մարմինները կաշխատեն լիարժեք կատարել իրենց պարտականությունները, որից կշահեն դպրոցի ուսումնադաստիարակչական, կառավարման և ղեկավարման գործընթացները:
- ✍ Դպրոցի տնօրինության կողմից գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար:
- ✍ Բարելավել առարկայական մասնախմբերի (մեթոդմիավորումների) աշխատանքը՝ զարգացնելով մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության, ինքնակրթության միջոցով:
- ✍ Բարելավել ծնողական խորհրդի հետ աշխատանքները. արմատապես բարելավել ծնողական խորհրդի դերը և այն ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում
- ✍ Բարելավել աշակերտական խորհրդի հետ աշխատանքները՝ տալով լիազորություններ աշակերտական ինքնավարության միջոցով:
- ✍ Բարելավել աշխատանքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ.
- ✚ հաղթահարել ներառականությունը, դրանք խաթարող սոցիալական խոչընդոտները
- ✚ ստեղծել ֆիզիկական համապատասխան միջավայր
- ✚ ԿԱՊԿ ունեցող սովորողների ինտեգրումը, ներառական կրթությունը
- ✚ ԲՄԹ-ի առկայությունը
- ✚ մանկավարժահոգեբանական խնդիրների հաղթահարումը:

✍ Դպրոցի մանկավարժների թիվը 27 է, որից բարձրագույն կրթությամբ՝ 25, միջին մասնագիտական՝ 2, ուսումնասօժանդակ աշխատողներինը՝ 15: Մեկ ուսուցչին ընկնող աշակերտների մոտավոր թիվը 7 է: Աշա կերտների միջին թիվը 175 - 185 է:

✍ Դպրոցում առկա է 17 դասասենյակ, 1 ինֆորմատիկայի դասասենյակ, 1 ինֆորմատիկայի կաբինետ, լաբորատորիա, արհեստանոց, առարկայական կաբինետներ, ճաշարան, բուժկետ, գրադարան, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, սպորտդահլիճ, սպորտհրապարակ, որոնք հիմնականում համապատասխանում են սահմանված չափանիշներին:

**4. Սահմանված նպատակների և խնդիրների
իրականացումն ապահովող
գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը**

Նպատակ	Խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ	Ժամանակացույց, պատասխանատուներ
1.Մանկավարժական համակազմը		
<p>1.Վերապատրաստումների, ատեստացիաների, սեմինարների, վեբինարների, ինքնակրթության, ինքնավերլուծության խթանման, դասավանդման որակների արդիականացման, առաջավոր փորձի տարածման, մեթոդական աջակցության, ներդպրոցական վերահսկողության միջոցով զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները՝ ա/ուսումնական գործընթացն ըստ նոր չափորոշչային պահանջների կազմակերպելու ուղղությամբ ք/սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար</p> <p>2.Զարգացնել դպրոցի հոգեբանական ծառայությունը՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար:</p> <p>3.Շարունակել հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչներին վերապատրաստման դասընթացներին ընդգրկելու աշխատանքը:</p> <p>4.Ապահովել ուսուցիչների S<S կարողությունների զարգացումը:</p> <p>5.Մասնակցություն հանրակրթական այլընտրանքային (միջազգային, փորձարարական, հեղինակային) ծրագրերին՝ առանձին բովանդակային, կրթական տեխնոլոգիաների կամ ուսուցման կազմակերպման ոչ ավանդական ձևերի ուղղությամբ:</p>	<p>1.Շարունակել հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչներին վերապատրաստման դասընթացներին ընդգրկելու աշխատանքը:</p> <p>2.Ապահովել ուսուցիչների S<S կարողությունների զարգացումը:</p> <p>3.Ակտիվացնել դպրոց – ՍՏՄԱԿ կապը: 4.Համացանցում կտիվորեն հետևել այլընտրանքային ծրագրերին: 5.Ծանոթանալ դրանց հետ:</p> <p>6.Փորձարկել դրանք դասապրոցեսներին:</p> <p>7.Քննարկել դրանք ըստ արդյունավետության, ըստ սովորողների հետաքրքրությունների:</p> <p>8.Ուսուցչի օգնականների և ուսուցիչների աշխատանքում բարելավել նոր պահանջների կատարումը՝ համատեղ դասավանդում, բազմազան կրթական կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու երեք մոտեցում, տարբերակված</p>	<p>2023-2028 թ.թ. Տնօրինություն, մասնախմբերի նախագահներ, հոգեբան, ուսուցչի օգնականներ</p>

<p>6. Կրթության մատչելիության ապահովում. դպրոցում այնպիսի հոգեբանամակավարժական միջավայրի ձևավորում, որը թույլ կտա յուրաքանչյուր աշակերտի իր հնարավորություններին և հակումներին համապատասխան յուրացնել կրթական ծրագիրը և լինել հաջողակ:</p> <p>7. Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում:</p> <p>8. Սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրում:</p> <p>9. Ուսուցչի օգնականների աշխատանքում բարելավել նոր պահանջների կատարումը՝ համատեղ դասավանդում, բազմազան կրթական կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու երեք մոտեցում, տարբերակված ուսուցման կարևորություն, մասնակցության ապահովում և այլն:</p>	<p>ուսուցման կարևորություն, մասնակցության ապահովում և այլն:</p> <p>9. Զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները՝ սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար:</p>	
2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ		
<p>1. Շարունակել սերտ համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը</p> <p>2. Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովմանը</p> <p>3. Դպրոցի կառավարման ժողովրդավարացում, դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում:</p>	<p>1. Ակտիվացնել դպրոց- համայնք կապը՝ դասալսումների, միջոցառումների, ծնողական ժողովների ժամանակ հրավիրելով նաև նրանց, ում մոտ ձևավորված են թյուր կարծիքներ դպրոցի կառավարման աշխատանքներում:</p> <p>2. Դպրոցի աշխատանքներում անընդհատ ներգրավել ծնողներին:</p> <p>3. Դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների դերը բարձրացնել, տալ որոշ լիազորություններ:</p> <p>4. Դպրոցական կյանքին մասնակից դարձնել համայնքին, համայնքի պատասխանատուներին:</p> <p>Որոշ դպրոցական միջոցառումներ դարձնել համայնքային:</p>	<p>2023-2028 թ.թ. Տնօրինություն, Խորհրդակցական մարմինների ղեկավարներ, համայնքի ղեկավար</p>
3. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան		
<p>1. Բարելավել դպրոցի պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարելավմանը</p>	<p>1. Ուսումնական միջավայրի ստեղծում՝ առավելագույնս բարձր մակարդակով կազմակերպելու</p>	<p>2023-2028 թ.թ. ԿԳՄՄՆ, տնօրինություն,</p>

<p>2.Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր, ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով</p> <p>3.Առարկայական կաբինետների ստեղծում,</p> <p>4.Համակարգչային տեխնիկայի, էլեկտրոնային գրատախտակների համալրում նոր սերնդի տեխնիկայով</p> <p>5.Կահավորել ժամանակակից գրադարան /նաև առցանց/ և ընթերցասրահ</p> <p>6.Սպորտային դահլիճի և սպորտհրապարակի կահավորում նոր գույքով</p>	<p>կրթական գործընթացը: Մարզպետարանին, բարեգործական կազմակերպություններին ներկայացնել նախագծեր՝ ուսումնական ժամանակակից տեխնիկա, սպորտգույք ձեռքբերու նպատակով:</p>	<p>մասնախմբերի նախագահներ, հոգեբան, ուսուցչի օգնականներ, գրադարանավար, ուսուցիչներ</p>
--	--	--

4.Աշակերտական համակազմը

<p>1.Ուսումնառության որակի բարելավում</p> <p>2.Արժեհամակարգի ձևավորում</p> <p>3.Սովորողների մոտիվացիայի խթանում</p> <p>4.Աշակերտական ինքնավարության խթանում</p> <p>5.Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում</p> <p>6.Մշտադիտարկումներ, կրթական կարիքի գնահատում և սովորողների ուսուցման անհատական մոտեցումների կիրառում դասապրոցեսում</p> <p>7.Աշակերտական խորհրդի նախաձեռնություններին աջակցություն</p> <p>8.Սովորողների մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորում</p>	<p>Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ՝</p> <p>1.նախասիրությունների բացահայտմանն ուղղված թեստեր</p> <p>2.մասնագիտությունների և մարդու բնույթի համապատասխանությունը ակտորոշող թեստեր</p> <p>3.մասնագիտությունների վերաբերյալ ֆիլմերի դիտում</p> <p>4.ճանաչողական այցեր, հանդիպումներ</p> <p>5.աշխատաշուկայի ներկայացում, վերլուծություն</p> <p>6.Ուսուցման գործընթացի բարելավում</p> <p>7.ուսումնաճանաչողական էքսկուրսիաներ</p> <p>8.Այցեր մշակութային օջախներ:</p>	<p>2023-2028 թ.թ. տնօրինություն, մասնախմբեր, աշակերտական խորհուրդ</p>
--	--	---

5.Համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

<p>1.Համագործակցությունների շրջանակի ընդլայնում</p> <p>2.Կոմպետենտ (կարողունակ) և սոցիումին ինտեգրված քաղաքացիների ձևավորում</p>	<p>1.Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում</p> <p>2.Սոցիալ-մշակութային դպրոցի</p>	<p>2023-2028 թ.թ. տնօրինություն, մասնախմբերի նախագահներ, հոգեբան, ուսուցչի</p>
--	--	--

	կայացում:	օգնականներ
6. Ուսումնական միջավայր		
<p>1. Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով նպաստել ուսման որակի բարելավմանը</p> <p>2. Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում.</p>	<p>1. անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում</p> <p>2. լաբորատորիաների, առարկայական կաբինետների, հանգստի և ժամանցի պայմանների շարունակական համալրում, արդիականացում</p> <p>3. դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում:</p>	<p>2023-2028 թ.թ. տնօրինություն, մասնախմբերի նախագահներ, հոգեբան, ուսուցչի օգնականներ</p>
7. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների		
<p>Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում, աշխատանք օժտված երեխաների հետ</p>	<p>1. վերջնարդյունքների գնահատում.</p> <p>2. մնացորդային գիտելիքի ստուգում</p> <p>3. որակյալ կրթություն առարկայական</p> <p>4. օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում</p> <p>5. օտար լեզուների խորացված ուսուցում:</p>	<p>2023-2028 թ.թ. տնօրինություն, մասնախմբերի նախագահներ, հոգեբան, ուսուցչի օգնականներ</p>
8. Տեխնոլոգիաները և նորարարությունը		
<p>1. Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում</p> <p>2. Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում</p> <p>3. Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում:</p>	<p>1. Ստեղծել մեթոդ-կաբինետ, կատարել ռեսուրսների համալրում, ժամանակակից գրականության ձեռքբերում,</p> <p>2. հեռավար դասավանդման հմտությունների զարգացում՝ ուսուցիչների ինքնակրթություն, սեմինարներ, վեբինարներ</p> <p>3. մենթորական համակարգի ներդրում</p> <p>4. էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում</p> <p>5. նոր սերնդի համակարգչային տեխնիկայի ձեռքբերում</p> <p>6. լաբորատոր սարքերի և սարքավորումների, ուսումնական նյութերի համալրում, արդիականացում</p> <p>7. մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ, քննարկումներ:</p>	<p>2023-2028 թ.թ. տնօրինություն, մասնախմբերի նախագահներ, ուսուցչի օգնականներ</p>
9. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր		
<p>1. Ուսուցիչներին իրազեկել դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին և դարձնել մասնակից դրանցում կատարվող փոփոխություններին</p>	<p>1. Իրավական ակտերի լուսաբանում</p> <p>2. e-draft.am կայքի ներկայացում, հանրային քննարկման դրված</p>	<p>2023-2028 թ.թ. տնօրինություն,</p>

<p>2. Ապահովել օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցությունը</p> <p>3. Համալրել ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմը</p>	<p>ակտերի ներկայացում</p> <p>3. ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում:</p>	<p>մասնախմբերի նախագահներ,</p>
--	--	--------------------------------

5. Ծրագրի իրականացման պատասխանատուներն են՝

- ✚ դպրոցի տնօրինությունը
- ✚ դպրոցի կառավարման խորհուրդը
- ✚ համայնքի ղեկավարությունը
- ✚ մանկավարժական խորհուրդը
- ✚ մեթոդմիավորումները
- ✚ աշակերտական խորհուրդը
- ✚ ծնողական խորհուրդը

6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Դպրոցի կառավարման խորհուրդը (ԿԽ):

Դպրոցի առաքելությունը և Ծրագիրը ենթակա են փոփոխությունների՝ ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ առանձին գործառույթներ իրականացվելուց հետո:

Ծրագրի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունն ամեն տարի ներկայացվում է կառավարման և խորհրդակցական մարմիններին:

Սահմանված են հետևյալ չափանիշները.

6.1 Յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող չափանիշներ

Գնահատման չափանիշը	Գնահատականը		
	բավարար	բավարար	բավարար
Նախատեսված աշխատանքները կատարվել են մասամբ			
Նախատեսված աշխատանքները հիմնականում կատարվել են			
Նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով			

6.2 Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության չափանիշներ

- ✓ կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան
- ✓ մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, դասավանդման որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը
- ✓ պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ

- ✓ տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը
- ✓ յուրաքանչյուր դասարանի աշակերտների բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր:
- ✓ աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների և մեթոդմիավորումների նիստերում, քննարկվում են առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության լուրջ փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու ձևերը
- ✓ ըստ անհրաժեշտության անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնում լուծման ուղիներ
- ✓ ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը
- ✓ դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ:

6.3 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշներ

- ✓ դպրոցն ընդգրկված է ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցում
- ✓ հիմնականում հաղթահարված են ներառականությունը, դրանք խաթարող սոցիալական խոչընդոտները
- ✓ ստեղծվել է ֆիզիկական համապատասխան միջավայր
- ✓ ԿԱՊԿ ունեցող սովորողներն հիմնականում ինտեգրված են հասարակությանը, ստանում են ներառական կրթություն
- ✓ դպրոցում առկա է ԲՄԹ (բազմամասնագիտական թիմ), որն ամենօրյա աշխատանք է կատարում ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ
- ✓ ԿԱՊԿ ունեցող սովորողներն ապահովված են դասագրքով , ուսումնաօժանդակ նյութերով
- ✓ Սովորողների մոտ հիմնականում հաղթահարված են մանկավարժահոգեբանական խնդիրները:

6.4 Աշխատակազմին արժևորման, խրախուսման, ինքնակրթության

միջավայրի ձևավորման գնահատման չափանիշներ

- ✓ յուրաքանչյուրի նկատմամբ անհատական մոտեցում
- ✓ անձնակազմի համար հնարավորությունների ստեղծում՝ առավելագույնս ներկայանալու աշխատանքում
- ✓ խրախուսման տարբեր ձևերի կիրառում՝ իր աշխատանքը լիարժեք կատարողների հանդեպ
- ✓ ուսուցիչներին մղել ինքնակրթության՝ տրամադրելով նրանց դասավանդման մոտեցումների արդիականացման վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն, կրթական կայքերի հասցեներ, ընդգրկել նրանց հեռավար դասընթացների, արդիականացնել գործիքակազմը և ռեսուրսները:

6.5 Սահմանված են դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերիների հետ համագործակցության, արտադպրոցական ուսուցման գնահատման չափանիշներ

- ✓ ակտիվացնել դպրոց- համայնք կապը՝ դասալսումների, միջոցառումների, ծնողական ժողովների ժամանակ հրավիրելով նաև նրանց, ում մոտ ձևավորված են թյուր կարծիքներ դպրոցի կառավարման աշխատանքներում
- ✓ դպրոցի աշխատանքներում անընդհատ ներգրավել ծնողներին
- ✓ դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների դերը բարձրացնել, տալ որոշ լիազորություններ
- ✓ դպրոցական կյանքին մասնակից դարձնել համայնքին, համայնքի պատասխանատուներին
- ✓ որոշ դպրոցական միջոցառումներ դարձնել համայնքային:

6.6 Բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ

- ✓ դասղեկի ժամերին այդ թեմաներով զրույցներ
- ✓ համապատասխան ծրագրեր իրականացնող ՀԿ-ի հետ համագործակցություն
- ✓ միջոցառումների կազմակերպում այդ թեմայով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

N/N	Ռիսկերը	Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները
1.	Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն	Խնդիրը ներկայացնել մարզպետարան, ԿԳՄՍՆ: Դպրոցի հետ համագործակցող կազմակերպություններին նախագծեր ներկայացնել: Ընդգրկվել Խաղաղության կորպուսի կողմից իրականացվող ծրագրերում:
2.	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչնդոտներ	Առաջարկ ներկայացնել վերապատրաստող կազմակերպություններին՝ ուսուցիչների որոշ վերապատրաստումներ տեղում կազմակերպելու համար՝ հաշվի առնելով նրանց՝ դասաժամերով ծանրաբեռնվածությունը, կենտրոնից հեռավորությունը:
3.	Դպրոցի գործունեության վերաբերյալ համայնքում ձևավորված կարծրատիպեր	Ակտիվացնել դպրոց- համայնք կապը՝ դասախոսման, միջոցառումների, ծնողական ժողովների ժամանակ հրավիրելով նաև նրանց, ում մոտ ձևավորված են թյուր կարծիքներ դպրոցի կառավարման աշխատանքներում:
4.	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն	Դպրոցի աշխատանքներում անընդհատ ներգրավել ծնողներին:
5.	Դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցություններ	Դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների դերը բարձրացնել, տալ որոշ լիազորություններ:
6.	Դպրոցի միջավայրի և ձևավորված մշակույթի	Դպրոցական կյանքին մասնակից դարձնել համայնքին, համայնքի պատասխանատուներին,

	խոչնդոտներ	որոշ դպրոցական միջոցառումները դարձնել համայնքային:
7.	Դպրոցի վերահսկողությունն իրականացնող պետական մարմինների կողմից դպրոցի գործունեությանը հնարավոր բացասական միջամտություններ	Առավելագույնս բարձր մակարդակով կազմակերպել կրթական գործընթացը, բարձրացնել դպրոցի, մանկավարժների հաշվետողականության, պատասխանատվության մակարդակը՝ կատարած աշխատանքների նկատմամբ:
8.	Դպրոցի կողմից կատարած աշխատանքների հաշվետվողականության մեխանիզմների անկատարություն	ԶԴԾ-ի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է ԴԶԾ-ի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ ԴԶԾ-ով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

8. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար

1. Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը որպես որակյալ կրթություն ապահովելու միջոց
2. Սովորողի կրթական կարիքի գնահատումը,
3. Սովորողի կրթական կարիքի բավարարումը տարբերակված ուսուցմամբ,
4. Օտար լեզուների խորացված ուսուցումը,
5. Արտասահմանյան իր հասակակիցների հետ անմիջական շփումների հնարավորությունների ստեղծումը՝ համաշխարհային մշակույթին ծանոթ, հայրենասեր քաղաքացու ձևավորումը,
6. Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի վարկանիշ ունեցող դպրոցի ստեղծումը,
7. Համընդհանուր կրթությունը բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված , և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները,
8. Սովորողների տեղեկացվածությունը հայաստանյան և համաշխարհային աշխատաշուկային,
9. Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտը՝ դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ,
10. Աշակերտների մտավոր զարգացման պայմանները,
11. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:

Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ծրագրի իրականացման համար

Մարդկային ռեսուրսներ

- Առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակական բարելավում
- Մանկավարժական համակազմի համալրում նոր փորձառու կադրերով

Նյութատեխնիկական բազա

- Համակարգչային տեխնիկայի համալրում

- Ժամանակակից սարքերի և սարքավորումների ձեռքբերում
- Էլեկտրոնային կրթական ռեսուրսների շարունակական համալրում և դասապրոցեսում վերջիններիս կիրառման ընդլայնում

Ֆինանսական ռեսուրսներ

- վճարովի ծառայությունների կազմակերպում
- տարածքների վարձակալություն

Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

- ✚ Փորձառու մանկավարժական համակազմը,
- ✚ Մասնակցային և համագործակցային աշխատանքը,
- ✚ Համընդհանուր ներառական կրթության իրականացումը,
- ✚ Կրթության որակի բարելավմանը միտված շարունակական, միջոցառումները՝ սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ,
- ✚ Կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը,
- ✚ Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում,
- ✚ Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն),
- ✚ Դպրոցում ձևավորված ավանդույթները,
- ✚ Խրախուսման միջոցները («Տարվա աշակերտ», «Տարվա շրջանավարտ» անվանակարգերը, շնորհակալագրեր՝ դպրոցասիրության և դպրոցը լավագույնս ներկայացնելու համար, շնորհակալագրեր հայրենիքի պաշտպանությանը մասնակցած շրջանավարտներին՝ դպրոցի սերմանած հայրենասիրական դաստիարակությանը հավատարիմ մնալու և հայրենիքի հանդեպ պարտքը պատվով կատարելու համար),
- ✚ Սովորողների մասնակցությունը միջազգային և հանրապետական մրցույթներին:

Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոնները

Դրական

- առաքելության իրագործման գործընթացում կրթական գործընթացի մասնակիցների (ծնողական համայնք, կառավարման, ղեկավարման մարմիններ, համայնքի, հասարակության ակտիվ խմբեր) ակտիվ ներգրավումը
- մարդկային, նյութական, ժամանակային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը
- արդյունավետ ղեկավարումը

Բացասական

- կրթական գործընթացի մասնակիցների իներտ, պասիվ վերաբերմունքը
- առաքելության նկատմամբ թերահավատությունը
- վարչական և մանկավարժական աշխատողների կազմակերպչական հմտությունների պակասը
- միանձնյա, ոչ թափանցիկ ղեկավարումը

Թվարկված ռիսկերը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝

- բոլոր հնարավոր ռիսկերի կանխատեսում և գնահատում,
- ռիսկերի կառավարման գործողությունների ճիշտ պլանավորում,
- գործողությունների համակարգված իրականացում:

Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները

Դրական

- Պետության կրթական քաղաքականության՝ կրթության որակի բարձրացմանը միտված՝ նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը
- Երկրի տնտեսական աճով պայմանավորված՝ կրթության գծով պետական ֆինանսավորման չափաքանակի ավելացումը
- Համայնքի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործողությունների կարևորումը և ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը դպրոցի կրթական գործընթացի կազմակերպմանը
- Լիազորված մարմինների կողմից դպրոցին տարբեր ծրագրերում ներգրավելը
- Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը

Բացասական

- դրական գործոնների բացակայությունը կամ ոչ լիարժեք առկայությունը
- ինչ-ինչ պատճառներով պայմանավորված սահմանափակումները
- հասարակության մեջ դպրոցի նկատմամբ ձևավորված կարծրատիպերը

ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✚ Ըստ հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների սովորողների կարողունակությունների ձևավորումը
- ✚ 21-րդ դարի կարողունակ և մրցունակ քաղաքացի
- ✚ Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած առաջադեմ դպրոց
- ✚ Փորձառու և ճանաչված մասնագետներ, նորարար և ստեղծագործ ուսուցիչներ
- ✚ Սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց
- ✚ Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան ԱԽ և ԾԽ գործունեություն
- ✚ ՏՀՏ միջոցների լիարժեք ներդնում և կիրառում դասապրոցեսում
- ✚ Սովորողների ինտեգրում միջազգային դաշտին
- ✚ Սովորողների բարձր ցուցանիշներ առարկայական օլիմպիադաներում
- ✚ Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն

ԵԶՐԱՓՈՒՄ

2023-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Այն ապահովելու է 2022-2023 թվականներին կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունը: Նախատեսված աշխատանքների համար կան արդեն ձևավորված ամուր հիմքեր: